

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆԱՑՆ

ՊՈՐԼՐՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԱՓՆԻ

Հովիւք երկու զդամբանական հանդէս Դափնեայ սիրելոյ իւրեանց և զգասիլ նորա ընդ՞դիս նուագեն. Մոփսոսի զգովութիւնս նորա և զարձանագիր շիրմին երգեալ, իսկ Մենալկայ զաստուածարել նորա: Թէ ո՞ւրդեօք Դափնիս այս լեալ, կամ զոյր ուրուք զդէմս բերիցէ, յոլովք են գուշակութիւնք. բայց ըստ հաւաստագոյն կարծեաց այլաբանէ երգս այս զՅուլիոսի կայսեր զմահ, և զդիցական ընդունել նորա պատիւ: Թերեւ ի հանդէս խաղուց ինչ կամ զօհից, որ ի պատիւ նորա կատարէին, յօրինեալ իցէ զայս քերթողիս:

ՄԵՆԱԿԱՍ ԵՒ ՄՈՓՍՈՍ

Մենալկայս

Հրմուտք երկոքեան դիպեալք, Մոփսէ, ի միասին,
Դու ի ծղօտ փրչել թեթեւ, իսկ ես ի տաղըս մըրմընջել,
Հիմ ոչ բազմիմք աստ ի միջի արքակաղնեաց եւ նըշդարեաց:

Մոփսոս

Լըրիցագոյն ես դու, Մենալկ. ինձ քեզ ի ճահ է հնազանդել,
Թէպէտ աստ՝ ուր ըզյողդողդ շարժեն զեփիւռք ըզհովանիս,
Լը թէ կամք ի քարայրիդ իցեն բազմել. տես իբր ահա
Արթ վայրի սրփուէ ողկոյզս ըզքարայրիւրդ ցան եւ ցիր:

Մենալկայս

Լմինտաս եւեթ ընդ քեզ դոյ ի լերինս աստ մըրցակից:

Մոփսոս

Օ ինչ զարմանք, զի եւ փեթեայ իսկ նա յաղթել փորձի տաղիւք:

Մենալկայս

- 10 Ըսկըսիր դու նախ, Մոփսէ, թէ զտարիանաց ինչ ըզփիլեայ
Լը թէ զգովից Լլկոնի, կամ թէ զԱյդրեայ ունիցիս վէճ.
Ըսկըսիր, ճարակաւոր այծեացն ի պահ կացցէ Տիտիր:

Մոխոս

Օյր արդ իսկ ի դալար կեղեւ փիճւոյն զըծեցի տաղ՝
Լըդ ընդ մէջ քանդակելով, զայն մանուսանդ առից ի փորձ .
Ղու հրաման ի հանդէս մատչել ապա տհր Լ՝մինտայ :

Մեկնակաւ

Որչափ ճապուկ ուռի ստորեւ քան ըզգունատ է ձիթենի ,
Վան ըզվարդ կամրերփեան որչափ օչնան անփառունակ ,
Լ՝յնչափ ի վայր քան ըզքեզ Լ՝մինտ ի մերս է յատենի :

Մոխոս

- Լ՝յլ դադարեա յերգոյդ , մանուկ դու , ի քարայրն ահա հասաք :
20 Ողբային զանկեալն անգութ մահու զՂափնի յաւերժ հարսունք .
Սըկայք յաւերժ հարսանցն էք դուք ողբոց , գետք եւ կաղնիք ,
Յորժամ մայրն զողորմ դիակն որդւոյն ողջագուրեալ ,
Եւ առ դիս եւ առ աստեղս անագորոյնըս բողոքէր :
Ոչ զեզինս դք յարօտոյ ի ցըրտագին գետ , ո՛վ Ղափնի ,
Լ՝ք յաւուրսն յայնոսիկ , եւ ոչ զալեաց չորքոտանի
Լ՝ք ըզճաշակ , եւ ոչ ի դեղ դալար մատոյց շուրթն ի ճարակ .
Օառիւծուց իսկ հեծեծեւ ամբիկեցւոց ընդ քոյդ կորուստ
Սըկայեն , ո՛վ Ղափնի , ամայաբնակ լերինք ու անտառք :
Ըզվագերս արամեանս ուսոյց Ղափնի լըծել ի կառս ,
30 Ղափնի եւ զպար օրհներգուաց Ղիոնիսեայ ածել ի սպաս ,
Եւ մորչ սաղարթիւք ըզճօճ գեղարդըն պատատել :
Իբր որթ ծառաստանին , զերդ ողկուզակք որթոյ ի շուք ,
Իբր անդէոց ցուլ , զինչ որայք քաջբերունի անդաստանաց ,
Ղու բողբոլին քոյոյրդ գեղ վայելչութեան :
Ինքն իսկ , յորմէ հետէ ճակատագիրք առին ըզքեզ ,
Ելիք Պալէս զարտորայս , ելիք եւ ինքն իսկ Լ՝պոլոն .
Յակօսս անդ , յորըս գարի աւանդեցաք ատոքահատ ,
Որումն չարաշուք ծնանի յաճախ եւ ստերջ վարսակ .
Ըզգիրդ մանուշակ եւ ըզնարկիս ծիրաներփեան
40 Ոքող փոխանակեալ եւ ստուարափուշ յառնէ դըժնիկ ,
Սըփուեցէք սաղարթս յերկիր , ածէք զաղբերբբըդ հովանի .
Օայսոսիկ , ո՛ հովիւք , Ղափնի ի սպաս իւր տայ հրաման .
Շիրիմ կանգնեցէք , տաղ ըզշիրմաւըն դրոշմեցէք .

ՈՐ Ի ՄԱՅՐԻՍ ԱՆՏԱՌԱՑ ՄԻՆՁԵՒ ՑԱՍՏԵՂԸՍ ՀԸՌՁԱԿԵԱԼ
ԳԵՂԱՆԻՈՅ ՀՈՎԻԻ ՀՕՏԻ ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ԴՆԻՄ ԱՍՏ ԴԱՔՆԻ :

Մեկնակաւ

Լ՝յնպիսի տաղ քոյին , ո՛վ դիւցականդ է մեզ քերթող ,
Որպէս նինջ ի դալարւոջ վաստակաբեկ պարտասելոյ ,

- Իբր ի տօթի բոյժ պապակոյ վըտակաբուղի քաղցրիկ ալեօք ,
Ոչ ի սրինգ եւեթ , այլ յերգ իսկ զուգատիպ վարժապետիդ ,
50 Սանուկ բարեբաստիկ , դու զհետ նորին կացցես ի դաս :
Իսկ մեք փոխանակաւ ըզմերըս զայս իբր եւ է երգ
Նըւագեսցուք , ի յաստեղս ըզքոյդ ի վեր ածել Ղափնի ,
Ը՛ջ Ղափնի ածել յաստեղս , զի եւ ըզմեզ սիրեաց Ղափնի :

Մովսես

Եւ զինչ վեհագոյն կայցէ նըւէր մեզ քան ըզդոյն .
Ինքնին իսկ պատանին արժանաւոր եկաց երգոց .
Եւ վաղ ըզքոյսըդ զայդոսիկ գովեաց մեզ տաղս Լստիմիկոն :

Մենայկաս

- Ի ուստիայլ յառեալ Ղափնի ընդ նորահրաշ սեամս Ոլիմպեայ ,
Օլիմպս ընդ ոտիւք նըշմարէ եւ ըզկամարն աստեղազարդ .
Հապա խայտան զուարթագին անտառք եւ շէնք առ հասարակ ,
60 Եւ Պան եւ հովիւք եւ օրիորդք յաւերժհարսունք :
Ոչ դայլ հօտին դարանակալ , ոչ վարմք նիւթեն եղջերուաց դաւ .
Հաճոյ հեզոյն է Ղափնեայ խաղաղութիւն . խրախոյս լերինք
Բառնան յաստեղս ամայիք , նըւագս անտառք իսկ յօրինեն ,
Նուագեն եւ ժայռք իսկ . աստուած , ով Մենայկաս , աստուած է նա :
Եր հաշտ ընդ քոյս , լեր բարերար . ահա քառեակ կանգնեալ բագինք ,
Երկոքին քեզ , ով Ղափնի , եւ երկոքին սեղանք Փեքեայ :
Բաժակ կըրկին ամի ամի դալար կաթամբ քեզ փըրփրադէզ ,
Եւ խառնարանըս կըրկնակ ածից ի նուէր պարարտ ձիթոյ .
Հաճախեցից մանաւանդ խրախունս առատ անապակաւ ,
70 Ի ձմերայնի առ հըրով , իսկ եթէ հունձք՝ ի հովանուջ ,
Նեկտար ըզմայլելի հեղեալ բաժակս արուիսական :
Ի իկտեանն ինձ Եգոն եւ Ղամետաս առցեն նըւագս ,
Ի հանդէս Ըլիեսիբէ զվարդապայիցն ածցէ զկաքաւ :
Ըյսոքիկ հարցին ըսպասք քեզ միշտ , թէ ուխտըս տարեկանս
Հաւերժհարսանց հատուցուք , եւ թէ զանդովք ի գալն ի շուրջ :
Հորչափ ըզծագ լերին կինճ , եւ ձուկն ըզգետ ցորչափ սիրէ ,
Մինչեւ մեղուք ի ծովոր , մինչեւ տաճին ճըպուունք ի ցօղ ,
Կացցէ անուն քոյին եւ փառք , մնասցեն յաւերժ քո դըրուատիք :
Հանգոյն Սպանդարմետին , հանգունակ դիցըն Ղեմետրեայ ,
80 Բեզ ուխտըս մըշակք ամի ամի նըւիրեսցեն .
Եւ դու զնոսա արասցես ի լուսն ուխտիցըն պարտապան :

Մովսես

Եւ զինչ ընդ այսպիսւոյ տաղիդ քեզ զինչ տաց մըրցանակ .
Ոչ հընչին գարնանաբեր ինձ հարաւոյ այնքան ախորժ ,
Ոչ այնպէս ծովափունք ի յերրադարձ ալեաց կոծեալ ,
Եւ ոչ ընդ ձորըս քարախիտս ընթացք գետոց կարկաջահոս :

Մեկնակաւ

Ըզդիւրաբեկ զայս ծըղօտ տացուք ի նուէր քեզ նախնծայ ,
Սա մեզ “ զԱլեքս չըքնաղագեղ սիրէր հովիւնն Կորիդոն , ,
Սա ինքն ուսոյց նըւագեւ “ Ո՞ր են խաշնըրդ , Սեւեբեայ , ,

Մոպսու

Իսկ դու ըզցուպս անընկալ , զոր ստէպ խընդրեալ Լ՛նտիգենեայ ,
90 Թէ եւ սիրոյ իսկ նա յայնժամ գոյր արժանի՝ ոչ ընկալաւ ,
Ըզգեղգեղեալն ի պըղինձ հանգէտ ծընգովք , ով Սեւակաս :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

10. Փիւնի գուստր Լիկուրգեայ արքային Թրակացւոց , որոյ տարփացեալ Դեմոփոնի որդւոյ Թե-
սէոսի արքային աթենացւոց՝ հիւրընկալեաց զնա ի դառնալ նորա ի պատերազմէն Տրովագայ :
Բայց ի գնալ նորա անդրէն յԱթէնս առ ի յանձանձեւ զիրա թագաւորութեանն , և ի յամեւ անդ
ընդդէմ խոստմանն , յուսահատեալ Փիւլիս և համարեալ զանձն լքեալ ի նմանէ , ի խեղդ մտաբե-
րեաց :
11. Ալեան աղեղնաւոր անուանի կրետացի , որ այնու ճարտարութեամբ ձգեաց զնետ յոձ պատատեալ
զմարմնով որդւոյ իւրոյ Փաղերեայ , զի սպան զսողունն առանց երգիծանելոյ նեախն յորդեակն :
Կարա արքայ աթենացւոց ի գիմելն ի պատերազմ՝ ընկալաւ պատգամ ի դից , զի ազգ՝ որոյ
կորիցէ թագաւոր՝ յաղթող գացի : Վասն որոյ և թշնամիք հրովարտակ արարին՝ մի ումեք մեզան-
չէլ արքային աթենացւոց : Իսկ ինքն ի մայրենորի կերպարանս գրգռեալ ընդ ոմանս ի թշնամեաց ,
սպանաւ ի նոցանէ . և իբրեւ ծանեան զնա թշնամիք՝ զի էր արքայն աթենացւոց , գարձան յեաս
պարտեալք անպատերազմ :
20. Ակնարկէ ի մահ Յուլիոսի Կեսարու , որ յատենի ծերակուսին ի հարուած քսաններից սուսերաց
անկաւ խողեսողեալ :
22. Մայր նորա իմա զՀուովմ , որ զգիական նորին ի հրապարակի մեծաւ ամբոխիւ և ողբակցութեամբ
ամենեկունն այրեաց ի խարուկի :
24. Ակնարկէ ի հրաշս՝ որ ի Սուետոնեայ պատմին նախ քան զմահ Կեսարու գիպեալ :
27. Բերրի առիւծուց և հրէշից Ափրիկէ , ուր Կեսար պարտեաց զԿատոն , զՍկիպիոն և զՅորբան :
29. Քանզի Յուլիոս Կեսար պայծառացոյց ի հռովմ զպաշտօն Սպանդարամեական գից , զորոյ
զպատկեր բարձեալ ի կառս ձգէին վագերք , և աստուածապարարկք գնային առաջի , ճօճելով
ի ձեռն տէգս կարճաբունս պատեալս ուռօք և բաղեղամբ :
36. Պալէս գիւք հովուաց և արօտից . իսկ Ադուս աստ յիշի իր արօտական , որ զխաշնս Աքմետայ ար-
քայի երբեմն արածէր հալածեալ յերկնից ի Դիոսէ՝ վասն սպանանելոյ իւրոյ զՎիկտորայս դարբ-
նողս շանթից նորա :
37. Գարի իմա զցորեան և զամենայն արմտի , ի տեսակէ զսեռն :
53. Մեկնա զգէմս Վիրգիլեայ բերէ , որպէս յայտ է ի յեախն տողից երգոյս՝ Սա մեզ զԱլեքս չըքնա-
ղագեղ և այլն . և քանզի սիրելիք եղեն Կեսարու մանտուացիք , վասն այն ասէ . Զի և շեմէ Դի-
ոսէ իւրի :
57. Ուլիսէս կոչին լերինք երկոտասան , յորոց գլխաւոր է ի կողմն Թեսաղիոյ՝ որ Թեակոսիէ ի Մակե-
դոնիս . և է բարձր յոյժ , մինչև գագաթան նորա յամպս ծրարել . վասն որոյ և քերթողք փոխա-
նակ երկնից առնուն զայն :
64. Քանզի Յուլիոս Կեսար ի կարգս դից գասեցաւ վճռով եռապետաց աստուածարեալ . և յայնմ
հեաէ Ոկտաւիանոս աստուածորդի անուանեցաւ :
71. Արաի հրուանդան է ի Քիոս կղզւոյ յեգեան ծովու , որ բերէ գինի ազնիւ . իսկ Նեկտար է աս-
տուածըմպելի կամ անմահական ըստ յունին բաժակ :
72. Լիկիէն , այսինքն կրետացի . քանզի Լիկտոս քաղաք է ի Կրետէ :
73. Ալէքսիէ , անուն հովուի . իսկ Վարդապետ էն Սատիրայք կամ Պայք նոխազոտունք , այսինքն դիք
շինականք մարգագէմք եղբրաւորք՝ ի միջոյ և ի վայր այժակերպք : Ծերագոյնք ի նոցանէ կո-
չէին Սիլենայք , որպէս Սիլենոս գաստիարակ Վիոնիսի , որոյ յաւանական ընդ համաստեղս կար-
գեցաւ :
79. Սլաւարաբէպ նոյն ընդ Դիոնիսի և ընդ Բաքոսի . իսկ Դեմետրէ խնամակալ արմտեաց և մշակու-
թեան՝ որոց ինքն առաւելապէս եղև հնարագէտ . և էր նա դուստր Կորիդեայ , և մայր Պրոսեր-
պինեայ , յորոյ ի խնդիր տաժանեալ յածէր ընդ երկիր՝ ի յափշտակելն զնա Պլուտոնի :
91. Այսինքն զցուպն հովուական , պընձի զարդուք գրուագեալ , և հաւասար անջրպետեալք ի մի-
մեանց ծնգակապ :